

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

ՄԵԾԱՀԱՐԳ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ

**Երևան**

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ որպես նորընտիր նախագահի մեր հայրենի Հանրապետության և ջերմապես մաղթում ենք Ձեզ արևշատ երկար տարիներ ու մշտանորոգ շինարար եռանդ Ձեր հայրենանվեր առաքելության ճանապարհին:

Մաղթում ենք նաև, որ Ձեր պաշտոնավարության շրջանը մեր վերածընված Մայր Հայրենիքի համար լինի հարատև վերելքի ու ծաղկումի շրջան աշխարհի խաղաղության պայմաններում:

Ընդունեցեք խորին հարգանաց հավաստիքը Մեր և համայն հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին,**
**9 դեկտեմբերի 1985 թ.**